կեղեցոյն քահանայք խնկօք և լապտերօք առաջի վաղ-
ջանեալ սուրբ Հօրն, և տարաք յեկեղեցին, և անդ
արարեալ հանգիստ՝ և ապա ելաք յեկեղեցւոյն և գնա-
ցաք յառաջ ի վերնակամարն եկեղեցոյն, որ ասի Փոքր
Աստուածածին, և անդ ևս արարեալ զհանգիստն, և
դէմ եդեալ մեր անցաք զքաղաքովն եւ ի քաղաքէն
ելեալ ի գերեզմաններն մտաք։ Եւ յայնժամ քահանա-
յիցն ի վերայ գլխոցն բարձեալ զդին մինչ ի հանգիստ
նմին, որ և եդաք սաղմոսիւք և աւրհնութեամբ և
երգօք հոգևորօք և մեծ ամբոխիւք յելելոցն անդ ա-
մենայն քաղաքիս ի պատիւ թաղման երջանկաչնորհ
առն, ի մէջ երկոցունց գերեզմանացն՝ իշխանին մեծի
որում անուն էր Երեմիա յԱմիթ քաղաքէ, և վար-
դապետին Ոհաննու Եդեսացոյ. որ և յիշատակ նոցին
աւրհնութեամբ եղիցի և աղօթիւք նոցին Տէր Քրիս-
տոս մեզ ողորմեսցի։ Եւ դարձաք ի վանս Սրբոյն Գէ-
որգեայ անդ արարեալ զպատրաստութիւն ճաշին, և
նստաք ի դարպաս Եղիազար վարդապետին, զոր նա
ի վաղոյ շինեալ էր ի պատիւ զալստեան Փիլիպպոս
կաթողիկոսին, հանդերձ ամենայն ժողովրդօք, քա-
հանայիւք և վարդապետօք, և նստեալ մեր առաջի
վարդապետացն՝ կերաք և յագեցաք ամենեքեան և
բարձաք զնշխարս կոտորոցն բաշխելով կարօտելոցն,
և ասացաք անդ ևս զերգս շարականացն խնկօք և
մոմեղինօք և գոհացաք և իջաք ի ծովեզերն ի Դրանէն
(դբռռ) մինչ ի Դուռն Նոր։ Եւ գնացաք յԱստուածա-
ծին ընդ վարդապետին Մարտիրոսի, և կացեալ անդ
և երաց զթղթերն բերեալ և գնաց մօտ առ իշխանն
Ռուհիճան, և մեր եկեալ ի տեղիս մեր։ Եւ երեկոյիս
առ Մղտեսիւն կացաք, զի հիւանդ էր։ Եւ յամենայն
եկեղեցիս երեկոյիս հրաման եղեալ ի վարդապետացն
զի Ամբիծք ասասցեն։